

տատուելու համար Երիքովի մէջ կամ շրջակաները մենակեցութեան համար՝ նախ Եւզիմիոսի եւ ապա՝ Սարայի առաջնորդութեամբ: Յուստինիանոս հոն շինեց մեծ եկեղեցի մը ի պատիւ Աստուածամօր, և հիմնեց ընդարձակ հիւրանոց մը: 670ին Արգուլֆ եպիսկոպոս ակերակ գտաւ Երիքովը՝ անշուշտ նախ պարսիկներու և յետոյ արաբներուն յարձակումներուն հետեանքով:

Ուաչակիրները հոն հիմնարկեցին նոր քաղաք մը, այժմու էր-Ռիհայի տեղւոյն վրայ: Զանազան կրօնական միաբանութիւններ հոն հաստատուեցան: Քաղաքը բարգաւաճութիւն մը ունեցած էր, երբ Սալահէտին վերջ տուաւ Երուսաղէմի լատին թագաւորութեան: ԺԳ. և ԺԴ. դարերուն ուխտաւորները պարծանքով կը յիշատակեն անոր ճոխ բուսականութիւնը. առատօրէն հոն կային արմաւենիներ, շաքարեղէգ եւ այլն. բայց ջրանցքները բանալու աշխատութեան լըքումը յառաջ բերաւ ամայացում. և ԺԶ. դարէն ըսկըսեալ Երիքովի հարուստ գաշտերը վերածուեցան ճշմարիտ անապատի մը:

Երիքովէն շճ վայրկեան հեռու, Պուրճ եր Ռիհայի մօտ, որ աշտարակ մըն է ԺԲ. դարուն շինուած, կը գտնուի Եղիսէի աղբիւրը (Այն Էս Սուլթան): Անոր առատ ջուրը յառաջ բերած է ճոխ բուսականութիւն մը՝ որ կը տեսնուի աղբիւրին շրջակաները: Եղիսէի անունով կը ճանչցուի այս աղբիւրը, վասն զի մարգարէն Երիքովի ժողովուրդին խնդրանքէն զգածուելով՝ ջուրին դառնութիւնը քաղցրացուց եւ արգասաւորեց զայն աղի կտորով մը: Թէոֆոս՝ Զ. դարուն աղբիւրին մօտ ցոյց կուտար եկեղեցի մը որ կը պարունակէր «Եղիսէի յիշատակարան»ը: Անոր հետքը չի գտնուիր այժմ. բայց հիւսիւսային կողմի մեծ շի-